««Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և հարակից օրենքների նախագծեր

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ

ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

1. 12-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«**տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն՝** լիազոր մարմնի կազմում գործող և պետական կառավարման և (կամ) պետական քաղաքականության առանձին բնագավառի գործառույթներ (այդ թվում՝ պետական ծառայությունների մատուցման) իրականացնող գրասենյակ»,

2. Լրացնել նոր պարբերություններ հետևյալ բովանդակությամբ՝

«**փորձագետ կամ փորձագիտական խումբ՝** բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և տեխնիկական, հրդեհային անվտանգության և հրդեհապայթյունավտանգավորության ոլորտում լիազոր մարմնի կողմից որակավորված մասնագետ(ներ).

առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտ՝ պարտադիր տեխնիկական անվտանգության, հրդեհային և հրդեհապայթյունավտանգավորության փորձաքննության ենթակա և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված արտադրական վտանգավոր օբյեկտ.

հրդեհային անվտանգության և հրդեհապայթյունավտանգավորության

փորձաքննություն՝ գործառույթ, որի նպատակն է ուսումնասիրել և տալ եզրակացություն արտադրական վտանգավոր օբյեկտի (առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտի) նախագծային փաստաթղթերի, հրդեհային պահպանության, հրդեհային անվտանգության միջոցների և հրդեհատեխնիկական արտադրանքի՝ հրդեհային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այդ թվում՝ հրդեհային անվտանգության պահանջներին և հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխանության մասին.»:

3. Վերջին պարբերությունում «չափորոշիչները» բառից հետո լրացնել « , փորձագետի որակավորման համար ներկայացվող պահանջները, որակավորման գործընթացը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածով սահմանված դասակարգման բնութագրիչներին համապատասխանող օբյեկտների անվտանգ շահագործմանն ուղղված տեխնիկական կանոնակարգերը, կանոնները, տեխնիկական անվտանգության նորմերը և հրահանգները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «հավատարմագրված» բառը փոխարինել «լիցենզավորված» բառով:

Հոդված 4. Օրենքում «հավատարմագրված» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «լիցենզավորված» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 5. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Տեխնիկական անվտանգության փորձաքննություն կարող են իրականացնել Տեխնիկական անվտանգության ազգային գրասենյակը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիցենզավորված և լիազոր մարմնի կողմից հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ լիցենզավորված անձ):

Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների տեխնիկական անվտանգության, հրդեհային և հրդեհապայթյունավտանգավորության փորձաքննությունն իրականացնում է Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը:»:

2. 3-րդ մասում «հավաստիության համար» բառերից հետո լրացնել «սույն օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով, եթե արարքը հանցագործության հատկանիշներ չի պարունակում» բառերով:
3. 6-րդ մասում «առնվազն մեկ անգամ» բառերից հետո լրացնել «, իսկ առանձնապես վտանգավոր օբյեկտը ենթակա է նաև հրդեհային և հրդեհապայթյունավտանգավորության փորձաքննության:» բառերը:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «գրառելու» բառից հետո լրացնել «տրամադրելու,» բառը,
2. 3-րդ մասի՝

- «ա» կետում «անունը՝» բառից հետո լրացնել «ֆիզիկական անձի և» բառերը, «տվյալները,» բառից հետո լրացնել «,իսկ ֆիզիկական անձանց համար՝ անձնագրային տվյալները» բառերը.
- «զ» կետում «կոնսերվացման» բառից հետո լրացնել «ապամոնտաժման,» բառը.

3. 4-րդ մասի՝

- «ա» կետում և ամբողջ տեքստում «վկայականի» բառը փոխարինել «պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի» բառերով,

4. 6.1-ին մասում «օբյեկտի գրանցումը» բառերից հետո լրացնել «,ռեեստրում գրանցումը դադարեցնելը» բառերով.
5. 8-րդ մասի 2-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«Ապամոնտաժման փաստը հաստատվում է Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի կամ լիցենզավորված անձի կողմից տրված անվճար գրավոր տեղեկանքով:»:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով հետևյալ բովանդակաությամբ.

«-) որակավորման վկայականների տրամադրումը համապատասխան ուսուցում անցած փորձագետներին»:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. «զ» կետում «անվտանգության» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ հրդեհային անվտանգության, հրդեհապայթյունավտանգավորության) բառերով.

Հոդված 9. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետում «փորձաքննության» բառից հետո լրացնել «, իսկ առանձնապես վտանգավոր օբյեկտի շահագործման դեպքում նաև հրդեհային և հրդեհապայթյունավտանգավորության փորձաքննության» բառերով.

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել 9-րդ և 10-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝

«9. Առանց լիազոր մարմնի կողմից որակավորման՝ փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը համարվում է անվավեր եզրակացություն և առաջացնում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված պատասխանատվություն:»:

Հոդված 11. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց երկամսյա ժամկետում գործունեություն ծավալող փորձագետները պարտավոր են լիազոր մարմնի կողմից որակավորվել: Նշված ժամկետից հետո փորձագետի կողմից կազմված եզրակացության համար սահմանվում է պատասխանատվություն սույն օրենքի 21-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատվում է տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող անձանց լիցենզավորման և հաշվառման կարգը:
3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-20-Ն և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքների համաձայն տրված հավատարմագրման վկայագրերը գործում են մինչև 2020 թվականի փետրվարի 31-ը:
4. Տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող իրավաբանական անձինք և (կամ) անհատ ձեռնարկատերերը սույն օրենքով նախատեսված և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման լիցենզիա ստանալու համար՝ օրենքով սահմանված կարգով, հայտը ներկայացնում են լիցենզավորող մարմին սույն օրենքի հրապարակվելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո, բայց ուշ քան 2020 թվականի հունվարի 31-ը:

Հոդված 14. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 3-րդ, 4-րդ հոդվածների և 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության:
2. Սույն օրենքի 3-րդ, 4-րդ հոդվածները և 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունն ուժի մեջ են մտնում 2020 թվականի մարտի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության

2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-20-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասում «կամավոր հիմքերից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ տեխնիկական անվտանգության ապահովման ոլորտում տեխնիկական անվտանգության փորձաքննության (քննության) հետ կապված հարաբերությունները, որոնց կարգավորման առանձնահատկությունները սահմանվում են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 2.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«

Հ/հ	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը	Լիցեն-զավորող մարմինը	***(սյունակը հանվել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***	Ոլորտ	Փորձա-քննու-թյան պահանջ	Մրցու-թային կար-գով
1	2	3	4	5	6	7
	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ					
2.1	Տեխնիկական անվտանգության փորձաքննության (քննության) աշխատանքների կատարում	ԿՄ		-	Փ	-

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետից հետո լրացնել նոր 26.1-ին կետ.

2 6 1	«Տեխնիկական անվտանգության փորձաքննության (քննության) աշխատանքների կատարում	բազային տուրքի 200-պատիկի չափով»

.

Հոդված 2. . Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-207-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասում «ձեռնարկատիրական գործունեություն» բառերից հետո լրացնել «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: